

սիրելիս . եւ կատարեցաւ առ իս բանն , թէ  
 Մարգարէ ի դաւառի իւրում պատիւ ոչ ունի :  
 Եւ միշտ զայն ասէին . է՞ր չնստար , այլ թո-  
 ղեր տեղտ ու գնացիր , այժմ դարձեալ եկիր . 70  
 զի՞նչ կամիս , եւ թէ զի՞նչ շահ եղեւ քեզ այդ  
 չափ շրջելու , յերուսաղէմ գնալու . թէ ասա  
 էիր՝ վաղ քահանայ էիր . զի՞նչ օգտեցար : Իսկ  
 ես չիւարեալ պապանձէի եւ ոչինչ տայի նոցա  
 պատասխանի . քանզի եւ զագգատոհմս իմ՝ 75  
 դարձուցին յինչն . զի ես որպէս դարիս էի եւ  
 նորա տեղացիք : Եւ էի միշտ եւ հանապաղ  
 արտում եւ ի սուգ . եւ ոչ գիտէի վասն է՞ր եւ  
 ո՞ւստ եհաս ինձ այս շարիք . եւ ապա իմացայ  
 եւ ծանեայ , որ վասն իմ ծովացեալ մեղացս՝ 80  
 Հասին ինձ անօրէնութիւնք եւ ես ոչ կարացի  
 տեսանել . Զի հատուցին ինձ չար ընդ բարւոյ .  
 եւ թէ Բազում եղեն քան զհեր վիտոյ իմոյ  
 ոյք ատէին զիս ի տարապարտուց . եւ Զոր  
 ինչ ոչ գիտէի՝ հարցանէին ցիս . եւ Բան անօ- 85  
 րէնութեան եգին ի վերայ իմ . մատնէին ,  
 զրպարտէին , հարկանէին եւ դատատան մա-  
 հու կացուցանէին , թէ դու չի պիտիս մեզ եւ  
 ոչ ես պէտք , զի մեք ունիմք քահանայ . եւ Ես  
 եզէ որպէս մարդ որ ոչ գոն խօսք ի բերան . 90  
 եւ թէ Որպէս մեռեալ յաւիտենից . եւ թէ Որ-  
 պէս մարդ առանց օգնականի . եւ Զոր ոչ  
 յափշտակեալն էի՝ տուժէի նոցա . Յարեան ի  
 վերայ իմ վկայք չարեաց . այլ եւ ասէին Այո՛  
 այո՛ տեսին աչք մեր :

95